— Ցանուն վանահօրն Հառիճոյ Տ. Արիստակէս վարդապետի ի նոյն միտս։ Թ. 159.

— Ցանուն Տ. Յակոբ քահանայի Գեորիս գեղջ, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական։ Թ. 280.

— Ցանուն Տ. Յարութիւն քահանայի Յակոբեան ի նոյն միտս։ Թ. 283.

— Ցանուն Տ. Աւետիս քահանայի Շողոյեան, որով շնորհի պատիւ աւագ քահանայութեան, Թ. 290.

Մակագրութիւն

Ի գրութեան Կոնսիստորիային Տփխեաց—«Պատուիրեմք Տ. Եղիշէ վարդապետի Մուրադեանց դարձուցանել անդրէն զ100 ռուբլիսն։ Թ. 155.

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Յունուարի 19-ին Սինոդը հրամայեց Մ. Աթոռի ձեմարանի վարչութեան և բոլոր դպրանոցների հոգաբարձութեան տալ տեղեկութիւն անցեալ 1906 տարուայ համար։

Նոյն թուին Սինոդը հրամայեց կազմել մատեան մէն մի վանքապատկան գիւղերի, արձանագրելու կալուածները մանրամասնօրէն։

Յուն. 22-ին Սինոդը հրամայեց ուղարկել ժապաւինեալ մատեաններ Կոնսիստորիաները օտարաց և վիճակային դրամները արձանագրելու.

Յուն. 24-ին Սինոդը հրամայեց ուղարկել պատճէնը Քիշինևի նահանգական դատախազին, Կարապետ Օհանջանեանին՝ Բես. Կոնսիստորիայի ատենադպրին՝ քրէական պատասխանատուութեան ենթարկելու զօշաքաղութեան և զրպարտութեան համար։

Նոյն թուին Սինոդը հրամայեց տալ հրաման Երևանայ Կոնսիստորիային՝ Կարապետ Բեկնազարեանին քահանայ ձեռնադրել Ալեքսու գիւղի՝ Արշակ Պողոսեանին՝ Մուղանջուղ՝ և Խաչատուր Տ. Յակոբեանին՝ Այլանլու գիւղի համար։

Յուն. 29-ին Սինոդը որոշեց Երևանայ Կոնսիստորիայի պահանջը Տ. Արտակ վարդապետից թողնել առանց հետևանաց. իսկ Տ. Արտակ վարդապետի ներկայացրած աթոռահաս արդեանց 1903 մատեանները պահանջել Կոնսիստորիայից։

Նոյն թուին Սինոդը որոշեց Վեհափառի հաճութիւնը հայցել Նահապետ Սարգսեանին քահանայ ձեռնադրելու Խաթունարխ գիւղի համար։

Նոյն թուին Սինոդը որոշեց, Մաստարայից Խաչիկ վարդապետի առած 50 ռուբլին պահանջել.

Նոյն թուին Սինոդը Մկրտիչ քահանայ Արշակունու բողոքը ուղարկելով Վրաստանի Կոնսիստորիան՝ պատուիրեց շուտով քննութիւն կատարել վստահելի անձի ձեռքով և հետևանքը յայտնել Սինոդին։

Նոյն թուին Սինոդը Վեհափառ Կաթուղիկոսի հրամանի համաձայն Տ. Եղիա վարդապետին վանահայր նշանակեց Ծիրանաւորի վանքում Տփխիս։

Նոյն թուին Սինոդը որոշեց Ղարաբաղի հոգաբարձութեան յանձնել կալուածների շահագործութիւնը 3 տարի ժամանակով։

Փետրուարի 7-ին. Տփխիսի Նպաստամատոյց Յանձնաժողովը քանիցս դիմել է Թովմա վարդապետին և իւր ուղարկած կանխիկ 21,000 ր. և ալիւրի, կահկարասիքի, հանդերձեղէնի, երկրագործական գործիքների՝ արժողութեամբ 10,000 ռուբլու՝ հաշիւները խնդրել։ Թովմա վարդապետը միայն մի անգամ, 1905-ի օգոստ. հաշիւն է ներկայացրել։ 1906-ին՝ տեղափոխուում է Ղզլար և նորա յաջորդ Լևոն վարդապետը ստանում է միայն 1,000 ռուբլի

առանց որ և է հաշուեմատեանի։ Թէ Լևոն վարդապետը և թէ մասնաւոր անձինք հաստատում են դրամական զեղծումներ, որի մասին թէ Լևոն վարդապետը և թէ Աւետիս Յովհաննիսեանց զեկուցագրերով իմաց են տուել Տփխիս՝ Նպաստամատոյց Ցանձնաժողովին։ Թովմա վարդապետ Բաղդասարեանը արհամարհել է Տփխիսի Նպաստամատոյց Ցանձնաժողովի պահանջը լրագրութեան դիմելուց յետոյ էլ. ուստի դիմել է Սինոդին և խնդրել, որ այդ վարդապետին ստիպեն հաշիւ տալ։ Սինոդը իւր փետրուարի 7-ի նստին լսելով յիշեալ Ցանձնաժողովի բողոքը, հրամայել է պահանջել Թովմա վ. Բաղդասարեանից մանրամասն հաշիւ՝ տալով նրան մի ամիս ժամանակ։

7-ին Սինոդը լսելով տպարանի վարչութեան դանդաղութեան մասին՝ Երևանայ Կոնսիստորիայի գանգատը՝ հրամայեց նկատողութիւն անել տպարանի վարչութեանը դանդաղութեան և անհոգութեան համար։

Նոյն թուին Սինոդը հրամայեց Երևանայ Կոնսիստորիային՝ հրաւիրել Մեսրոբ վարդ. Մաքսուտեանին Հ. Նախիջևան, հոգևոր կառավարութեան մէջ ռուսահպատակութեան երդումն ստանալու համար։

Ամուսնալուծութիւն

Յունուարի 24-ին Սինոդը մերժեց Սանդուխտ Մարտուխեանի խնդիրը՝ չգտնելով լուծման համար հիմք։

Նոյն թուին Սինոդը լուծեց Մկրտչեան ամուսինների պսակը և երկսին էլ թոյլ տուեց ուրիշների հետ ամուսնանալ։

Յուն. 26-ին Սինոդը լուծեց Բայանդուրեանց ամուսինների պսակը և միայն կնոջը իրաւունք տուեց ամուսնանալու։

Յուն. 29-ին Սինոդը լուծեց Քամալեան ամուսինների պսակը և միայն կնոջը իրաւունք տուեց ամուսնանալու։

Յուն. 31-ին Սինոդը լուծեց Գիւլնազարեան ամուսինների պսակը և միայն մարդուն իրաւունք տուեց պսակուել։

Նոյն թուին Սինոդը լուծեց Բուրդոտեան ամուսինների պսակը և միայն կնոջը իրաւունք տուեց պսակուել։